

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան դիմը 10 բուր, կես տարվանը 6 բուր:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միակայն կարողությունները:

Ստամբուլից և Կոնստանդուպոլիսից  
Կարողությունները  
Կարողությունները  
Կարողությունները

Կարողությունները բաց է առաջադրում 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յուրաքանչյուրը ընդունվում է ամեն լիզուով:

Յուրաքանչյուրը Վրաստանի համար գնում է և  
Խաղաղության լուսին 2 կոպեկով:

## ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հայոց թատրոնի  
Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:  
Առաջին անգամ: Ֆրանսիա: Նամակ Ֆրանսիայից:  
Նամակ Ֆրանսիայից: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ  
—ՊԱՅՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ: ՖԵԼԻՍՏՈՆ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Նիժե ուղիղ է թե թատրոնը վարժոց է,  
ուր ուղղություն ու կրթություն է առնում  
հասարակաց վարժն ու բարքը, ինչ է ու  
րեմն հայ թատրոնը:

Յանդուզն դատողություն չի լինի անել  
թե դա նախ այդ անունն արժանի չէ,  
այսինքն՝ այդ անուն իբր չէ. երկրորդ,  
նա ուղղություն ու կրթություն վարժոց  
չէ: Այս գաղափարից դուրս է այն օգուտ,  
որ նա պատահական բերաններով տուեց.  
հայը, այդ ընկած ու վատացած հայը  
Թիֆլիսում, հայ դերասանի համար էն  
հրապուրուած, համարձակեցաւ, սիրտ ա-  
բաւ, առանց կարմրելու ոտ ներս դնել այն-  
անդ, ուր հայերէն էր խօսվում, և առա-  
ջին անգամ քաջութիւն ունեցաւ զովնու  
հայ լեզուի ներդաշնակութիւն և ընդու-  
նակութիւն, որ լսում էր մեր Բիւզանդեան  
չնորհալի հիւրերի բերնէն, և ձկնում էր  
նոցա արձակ ու համարձակ լեզուի տակ:

Ասում էի թե հայ թատրոն չը կայ, և  
եղածը ուղղութեան ու կրթութեան վար-  
ժոց չէ: Չեմ կարծում թե այս խօսքերն  
ապացուցութեան կարօտ լինին. բայց և  
այնպէս, ցանկացողին հաս մի երկու կարծ  
որ ով հետ և. — նախ, որովհետեւ այնտեղ  
հայ կեանք չը կայ, և երկրորդ, որովհետեւ  
այնտեղ հայ կեանքին նմանողն էլ չը կայ:  
Ոչ հայն է տեսնում բեմի վրա (բացի դե-

րասանէն, որ իբրև արիւն՝ հայ է), և ոչ  
հայի նմանը: Միայն անթիւ Ֆրանսիացիք—  
Քալօ, Մինար, և՛ ընկերութիւն  
(գարդի համար). և այդ բոլորն էլ իրենց  
չափազանց անընկալութեան և յիմար շին-  
ծուութեան մէջ իրարից մնայի չափ տար-  
բերութիւն չունին:

Ուղղութեանը դարձի պատուելի քալօ-  
ներն իրենք, սաստիկ վրդովուած, արգելում  
են որ մարդմ Մինարներ չը համարձակին,  
նոցա աղջիկներ ի առջև, զանազան անբա-  
րոյական բաներ պատմել (երեկ օթեակնե-  
րում և արժանների վրա նստող մտաղ  
աղջիկները համար վտանգ չը կայ թե նոցա  
կոյս մտքերն ու սրտեր պտտուելին այնպի-  
սի պատմութիւններէ և տեսարաններէ):  
Քալօն ու Մինարը իսօ, վարքը ու բարք ուղ-  
ղող ու կրթող՝ ընտրովի և աննման մար-  
դիկ են. — երկու հայր, մի յանկարծ և  
սխալմամբ լոյս ընկած ապօրինի որդու տէր:  
մի որդու երկու հայր. երկուսն էլ երբեմն,  
հայրական գործով սաստիկ յուզուած ժա-  
մանակ, ուզում են մէկը միւսից խել արօ-  
րինիկ հայր լինելու պատիւը, բայց դար-  
ձեալ հաշտվում և փոխադարձ հաւանու-  
թեամբ երկուք մէկին հայր են դառնում  
և — նորա վիճակը ապահովելուն հայրաբար  
հոգ տանում:

Վերջապէս, — քալօ, — Մինար... (ձայնը  
երթալով բարձրացո՞ւ որքան կարող են,  
տրաքուելու չափ, բայց ի սեր Աստուծոյ՝  
առանց տրաքուելու)... — Մինար... — քա-  
լօ...:

Մինար. Կու ինչե՞ր ասում ես — վատ է:  
Քալօ. Որովհետեւ դու ասում ես — լաւ է:  
Մինար. Համաձայն եմ:  
Քալօ. Արեւմտ համաձայն ես:

Որքան լսեցի, բոլորը դժգոհ էին այդ  
խաղի ընտրութեան: Մէկն ասում էր, սա-  
տանէն դիտել դա ինչ բան է: Միւսն ասում  
էր, ես ոչինչ չեմ հասկանում: Երրորդն աս-

ում էր, խոյտառակութիւն, եղբայր, խոյ-  
տառակութիւն: Մէկն էլ իւր խորին դժ-  
գոհութիւնն ու արհամարհանք հրապա-  
րակաւ յայտնեց, սակայն թե Բազաղխանի  
բան է: Այդ խօսքի վրա ես, խոնարհ ծա-  
ռայս, Բազաղխանի համար թուր քաջեցի  
անդրադարձելով քննադատին, թե Բազաղ-  
խանէն, իւր թունդ երազում անգամ, այդ-  
պիսի բան մտքովն անցկացուցած չունի.  
— երկու հոգի, քալօ ու Մինար, մի որդու  
հայր. մանաւանդ որ երկուսն էլ համաձայն  
հաւանութեամբ ընդունին՝ այդ բան... Ոչ,  
բազաղխանցին ապուշ չէ: Ոչ էլ քալօ, Մի-  
նար և ընկերութիւն (գարդի համար) կա-  
րող էին այդքան սպուշ լինել. անշուշտ  
հեղինակի ուղղի դադանիքն է այդպիսի  
քալօ-Մինարների շնորհ լինել:

Ի վերայ այդ ամենայնի, մարդիկ քիչ ու  
միջ ծիծաղեցան, պէտք չէ ուրանալ: Իսկ  
և իսկ չայլ էլ ծիծաղելու ժամանակն է.  
— Հայրերինքն արդէն վերականգնած է, իւր  
եղբայրներ խաղաղութիւն ու բարութիւն  
են վայելում. ամենայն ինչ կատարեալ է  
վանում ու Մշու՞մ: Թիֆլիսում կարելի է  
քալօի հասուն աղջիկներ ծրվճրվոցով ու  
վրժվրճոցով ուրախանալ ու ծիծաղել և  
նոցա այժման շարժութեանով ու վերուվեր  
թուստոցով և հպանքով (minauderie)  
զմայլիլ ու ուշաթափիլ: Հայր են ասի-  
րութիւն, գին ու օրութեան ու  
գին, ան ձն ու օրութեան, առաքինի և  
բարեբաղի լինելու այդ երեք յատկութիւն-  
ներն էլ կարելի է քալօ-Մինարի և ընկե-  
րութեան օրինակէն ուսանել: Քալօ կատա-  
րեալ հայրնասէր է (յուսով որ կը կարո-  
ղանայ մինևսոր դառնալ և իւր բարեկե-  
րի զին թանգացնել), սանդուղներ միջի  
մէջ և դռների ետև պահուող սիրամոլ  
հոսուս արն և կատարեալ զինուորութեան  
ողի են արտաշնչում ու ներշնչում, իսկ ա-  
պօրինի որդիներ դէս ու դէն ցանող ու մի

կատարեալ կատարեալ ու կեղծաւոր Տերանս  
անձնութեան տիպար է: Այդ օրինակ-  
ներով կազդուութեամբ ու ոգևորելով, թիֆ-  
լիսցի հայն կ'երթայ անշուշտ ու կը  
փրկէ իւր եղբայրներ քրդի ու չէրքէզի  
զերութենէն:

Ներքին է արդեօք եղբայրակել, ասելով  
թե այդպիսի մի թատրոն՝ հայ չէ, և հա-  
յու թեան չէ ծառայում: Նիժե այնտեղ դե-  
ղի համար դանդում է և մի լաւ բան, զա  
ոչ թե քննութեան, նախատեսութեան, և  
որոշ յատակադէի արգասիք է, այլ՝ մի բազ-  
ղաւոր պատահմունքի:

Վերև ներքև, բաւական տեղեր կային  
դատարկ, չը նայելով որ ներկայացումը յօ-  
գուտ մի շատ արժանաւոր դերասանի էր:  
Իբրև ընծայ, մի պակ և երկու երեք հատ  
ողորմելի, տրորուած փունջեր, այդ մարդու  
համար բոլորովին անպէտք: Այո՞, նաև մի  
քանի սոց ոտանաւոր, տանձ ոսկի, միտքն  
օղբանութիւն:

Թատրոնի ծախքը մի քանի երիտասարդներ  
տեսան. այնպէս որ դրամարդիւնքն ամբող-  
ջապէս կը մնար Պ. Մնակեանին:

Կերասանի վերադարձը դէպի իւր ազ-  
բատիկ սենեակը խաւար ու խոնարհ էր  
ոչ լոյս, ոչ ծառայանք, ոչ գոռու գոյ:

Ս. Մ. Բ. Պ.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք որ Ներքինեան դպրոցի գանձա-  
բանից պակասել է 3000 բուր: Յանկալի է որ  
այդ լուրը հերքվել և հերքուած, ի հարկէ, լի-  
նէր ոչ թէ լոկ խօսքերով, այլ հաստատ փաս-  
տերի վրա հիմնուած, որովհետեւ այդ լուրը անա  
մի քանի օր է տարածվելով քաղաքին մէջ, բա-  
ւական տարակուսանք է պատճառում Թիֆլիսի  
հայ հասարակութեանը:

Ռուս լրագիրները հաստատում են որ Թիֆլի-

## ՖԵԼԻՍՏՈՆ

Ինչ սարսափելի դժուար բան է եղել ֆելիստո-  
տոնիստ լինելը:

Նիւթ չը կայ որ մարդ կարողանայ մի բան  
գրել: Թէպէտ նիւթերը անսպառելի են, բայց  
լաւագոյնը այն է, որ պէտք է ընտրել երկու  
չարեաց փոքրագոյնը, այսինքն նիւթերի յար-  
մարագոյնը, կամ լաւ ես՝ այնպիսի մի նիւթի  
վրա պէտք է խօսել, որ ոչ ոք չը վիրաւորվի,  
ինչպէս թրքական առածը ասում է շնէ շնէ  
և անստը նէ քեպպապ: որ նշանակում է — ոչ  
չամբուրը այրվի և ոչ խորովածը:

Այժմ ընթերցողները կասն թէ, այս իրո՞ւն էլ,  
Բաֆֆիի «Ինքնութիւն» մէջ պոլսեցի թովմաս էֆէն-  
դու նման առանց առածի չէ խօսում, իսկ ես  
կը պատասխանեմ թէ թովմաս էֆէնդին միայն  
իւր առածներով էր խօսում, վասն զի ինքն էլ  
իւր ծնունդ էր, մինչդեռ ես ամեն տեսակ կեն-  
դանեաց և մարդկերանց համար անսպառելի ա-  
ռածներ և անէկզոսներ ունեմ, բայց խնայողու-  
թիւն անելով չը վատնելու հարկադրված եմ,  
որովհետեւ մի օր ի լոյս բնծայելու մտադիր եմ,  
մանաւանդ Նարարդին մուլայի դու չը լաված  
ընտիր անէկզոսները, որոնք գուրկ չեն բարո-  
յական դասերից:

Հիմայ դառնանք մեր նիւթի խնդրոյն: Չը գի-  
տեմ, ինչ բանի վրա գրեմ. եթէ խնդրի փշածը  
գրեմ, պիտի ասեն թէ իրո՞ւն շողերից խնդրե-  
ցել է, եթէ ամեն բանի ճշմարտը գրելու յան-  
դգնիմ, Թիֆլիսից շուտով պէտք է փախչեմ, որ  
բնաւ իմ հաշուին չը գար, որովհետեւ քիչ շատ  
տեղական բարբառին վարժակցայ, վարք ու  
բարքին տեղեկացայ, զմանազան սովորութիւննե-  
րի ծանօթացայ, և բանը այն աստիճանին հասց-  
րի, որ ես ես սկսայ պոլսեցիներին չը հաւանել.  
շատ անգամ ասում եմ Վե՞ր, Աստուած սիրես,  
դրանք հոռոտներ են: կարծես թէ ես հոռոտ  
չեմ. բայց ճշմարտան ասած, ես ինքս զգում եմ  
որ այլ ես հոռոտ չեմ, այսինքն ոչ հոռոտ եմ,  
ոչ թիֆլիսեցի, այլ մի տարօրինակ խառնուրդ,  
մի նոր սերունդ՝ անպատճառ ինձ մի ուրիշ ա-  
ծական պէտք է տալ: Բացի սորանից կարծես  
թէ ազգասիրութիւնս էլ աւելացաւ, ես զգում  
եմ իմ մէջ մի ծանրութիւն, երևում է որ գնա-  
լով գնալով ազգասէր եմ դառնում. եթէ այս  
կերպով շարունակվի, ազգասիրութեամբ այն  
աստիճան պիտի ծանրանամ, որ այդ բեռնիցը  
թեթեւալու համար ազգասէր չեղողներին պիտի  
բաժանեմ. դժբաղդաբար Թիֆլիսում էլ ազգա-  
սէր չեղող ոչ ոք չը կայ, ամենքը ջերմ, կրա-  
կոտ, վառվառն հայրենասէրներ են և պոլսեցի-  
ներին նման հոռոտ չեն, այսինքն տակը փոտ,  
վրան փիլիպպոս չեն, որ նշանակում է ներքուստ  
չահասէր, արտաքուստ ազգասէր, իսկ Թիֆլիսի

երիտասարդութիւնը ընդհակառակը արտաքուստ  
չահասէր և ներքուստ ազգասէր է, և սարսափե-  
լի կրակավառ է, այնպէս որ մի քայլ հեռուից  
մարդ կարող է պայթիւթը վառել:  
Բայց ես դարձեալ հեռացայ ֆելիստոնիստի  
պաշտօնից: Ուզում էի ասել որ Թիֆլիս համա-  
կրելի քաղաք է, չեմ ուզում հեռանալ. սակայն  
միմիայն Թիֆլիս մնալով մարդ չէ կարող փողոց-  
ների փողին կուլ տալով ապրել. պէտք է մի  
բան անել, մի բանով պարագել: Օրինակի  
համար կամ վաճառական, կամ գործակատար,  
կամ վիպասան, կամ խմբագիր (ճրի կարդացնե-  
լու համար), կամ ինտելեկտուալ, կամ ուսուցիչ,  
կամ տեսուչ, կամ քահանայ (ամենից հեշտը),  
կամ հրդեհի ապահովութեան ազնու (ամենից  
համեղը), կամ լուսանկար (բացի աւերակներից),  
կամ դերասան, կամ դերասանուհի, կամ պիէսա  
թարգմանող (Աստուած կարողութիւնս տայ), կամ  
բժիշկ (փողի հիւանդութեան օգուտ չունի), կամ  
փաստաբան (այժմ ամեն մարդ իրաւաբան է),  
կամ էլ միմիայն միաբան (մեղայ Աստուծոյ, Աս-  
տուած թողութիւն չորհնեցէ), կամ... ես ինչ  
գիտեմ, վերջապէս մի բան պէտք է լինել, ես  
էլ ճարահատեալ որոշեցի ֆելիստոնիստ լինել:  
Բայց ո՞ւմ մտքից կանցնէր որ սա դժուար մի  
ձեռնարկութիւն է եղել Նիւթ պտուելու համար  
չը գիտեմ ո՞ւր գնամ, կիրք կորուսած ամուսնոյ  
նման փողոցներում ման եմ գալիս նիւթ ճարե-  
լու համար: Հայերի կրօնը գնամ, — ուսուցիչն չը

գիտեմ որ հասկանամ ինչ խօսում են: Չարմա-  
նալի բան է, այնքան դժուար գլուխ չեմ, որ մի  
լիզու չը կարողանամ սովորել, բայց և այնպէս  
անկարելի եղաւ ինձ երկու տարվայ մէջ գոնեայ  
ուսուցիչն հարկուր բառ անգիր անել և խօսել:  
Այսօր մի բառ սովորում եմ, էգուց մուսանում  
եմ, կամ նոյն բառի նման մի ուրիշ բառ եմ ար-  
տասանում, այնպէս որ մի խոյտառակ բան է  
դուրս դալիս իսկ ոմանց տունները այցելելու.  
համար վրացերէն բնաւ չը գիտեմ, մինչդեռ տե-  
ղացիք այս ամենատարակալի դժուար լիզու  
շատ շուտ են սովորում առանց խեղդվելու. ու-  
րովհետեւ ես վրացերէն մի քանի բառ արտասա-  
նել փորձեցի, երեք օր կովորուց ցաւեց, այս հա-  
շուով եթէ լիզուն ամբողջապէս սովորել ուղե-  
նամ, զիֆտերիտի հիւանդութիւնից պէտք է մեռ-  
նեմ: Սակայն ամենքը ինձ նման չեն, օրի-  
նակ, Թիֆլիս նոր եկած և մեծ ու պտիկ 17  
հոգիէ բաղկացած մի հայ ընտանիք՝ հայերէն  
չը գիտող մի վրացի ծառայ են վարձել, ծառայ  
հայերէն սովորել չէ ուղեցել: 17 հոգի երեք  
չորս ամսվայ մէջ աշխատել և վրացերէն են  
սովորել ծառային հետ վրացերէն խօսելու հա-  
մար: Այ, ազգասիրութիւն, այսպէս է հարկաւոր  
որ հայկական հարցը շուտով լուծվի:  
Ռուսերէն լիզուի մէջ ունեցած ոյստ զգում  
եմ երբ ճաշարանները յաճախում եմ, ես ինքս  
էլ հաւանում եմ յառաջադիմութեան, համարեա  
բոլոր կերակուրների անունները ուսուցիչն զի-

որ հասարակական ժողովը անպատճառ լինելու է այս տարվայ սեպտեմբեր ամսին,

Պ. Ա. Թոմասյանի դատախազութիւնը Վիւր-քայ Հայաստանի մասին, որ պէտք է լինէր շարաթ օր, մայիսի 23-ին, յետաձգվեցաւ մի ուրիշ օրով: Մենք կը յայտնենք մեր ընթերցողներին թէ երբ կը լինի այդ դատախազութիւնը:

Արժանաճատ աղբիւրից մեզ հաղորդում են, որ անցեալ տարի Անդրկովկասեան երկաթուղու նաւթային բաժնի (Բաբու-Բալխանի) երթիկները պատճառեց նրա ընկերութեանը 35 հազար ռուբլ փաս: Յայտնի է, որ այս ճանապարհների եկամուտը ապահոված է տէրութեան կողմից և այս փաստը իր ծանրութեամբ ընկնում է նրա գանձարանի վրա: Այս հանգամանքը միայն մտքի առաջ ունենալով, շատ ժամանակ չէ որ տեղային երկաթուղու կառավարչական վերահսկողութիւնը ներկայացրել էր ծանապարհային հաղորդակցութեան նախարարութեանը այն նախադիմումը թէ ապագայում այդ փաստերին վերջ դնելու համար անհրաժեշտ է նախ բարձրացնել բեռնակրութեան գինը մինչև 1/10 կօպ. պուզ վերստից, առանց մի որ և իցէ բեռների տարբերութեան: Երկրորդ թույլ տալ ընկերութեանը առնել 1/3 կօպ. ամեն մէկ պուզից բեռնաւորելու և դատարկելու համար բացի նաւթից, որը կարող են և իրանք, ուղարկողները, բեռնել ու դատարկել: Իսկ երբ ուղարկողները այս անկողաց բանացնեն ընկերութեան կարգաթերքը, պիտի վճարեն ամեն մէկ պուզից ըստ համաձայնութեան—մինչև 1/10 կօպ. և ոչ աւելի: Արեւմտեան երկաթուղու կառավարչութիւնը, որպէս և հարկաւոր էր սպասելու, այս առաջարկութիւնը մերժեց, որովհետև այդքան բարձր տարիքը (1/10 կօպ.) նաւթի համար չէր կարող վատ ազդեցութիւն չունենալ նրա վաճառահանութեան վրա: Ան ծովի եզերքում և կարող էր տակաւին խանգարել մեր, այս տարի սկզբնաւորած, յարակցութիւնները Գերմանիայի հետ, որը, իր մէջ նաւթի գործարաններ կառուցանելու համար, քանի միւրեւն առաջ անձնաւորութիւններ է արել Անդրկովկասում նաւթի վերաբերմամբ: Բացի այդ ամենը նաւթը, որպէս նոր ճիւղ մեր վաճառահանութեան, պահանջում է ամեն տեսակ խրախուսանք և դիւրութիւնը:

Մեզ գրում են Ս. Պետրոպոլիտից «Ազատի» թերթի Գրիգոր սրբազան եպիսկոպոսի այստեղ գալու պատճառը ոմանք մեկնում են որպէս թէ Եջմիածնի ճեմարանի և Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի համար վարժապետներ է որոնելու, իսկ ոմանք ստում են թէ սրբազանը յանձնարարութիւն ունի Եջմիածնի կողմից հայր ստեանելու յայտնի հայ վաշխառուի հետ և սրա ձեռնից Եջմիածնի փողերն ազատելու... Լաւ է

տեմ. երբ սուպ պատուիրեմ շէրջ մուխի» ասում են, որ եթէ չեմ սխալվում, նշանակում է առանց ճանճի. որովհետև Թիֆլիսի ճաշարաններում սուպը ձմեռը մտով, իսկ ամառը ճանճերով են պատրաստում, շատ կարելի է տեսնալ տուրքեան մի նոր եղանակ է. Թիֆլիսում ապրուստը թանկ լինելուն պատճառաւ. ծանր ծախքերի դէմ դնելու համար տնտեսադրութեանը հաւասարակշռութիւնը պահպանում են, որին նակ, բենեֆիտ ունեցող գերաստնին փոխանակ եւրոպական մուզիկայով ընդունելութիւն անելու մի նոր խնայողական միջոց են գտել, այն է— դավուլ, զուռնա, դիմպլուպտո:

Անցեալ օր, դէս ու դէն գնամ, ման գամ, մի նոր նիւթ ճարեմ ասացի (ևս հիմի ուրիշ դարը չունենի): Միտայէլեան կամրջի միւս կողմ անցկացայ, և սկսայ բոլորովին անձանութ փողոցներում պատահմամբ պտոյտներ անել. չը գիտեմ ինչպէս պատահեց, տեսայ որ գետի եզերքն եմ հասել, այնտեղ այնպիսի մի նիւթ գտայ որ քիչ մնաց, լրացրայ խառն լուրերի կարգը ևս ինքս նիւթ պիտի դառնայի հետեւալ սողորով: «Այս առաւօտ կուր գետի ափում ձկնորսները մի մարդու դիակ գտան, որ չները խածնելով սպանել էին, սպանեցի զուրս հանված թղթ-թերթի իմացվեց որ «Մշակ» լրագրի ֆելիտոն գրող «Կըռօն» է եղել: Ոստիկանութիւնը չների հետքը գտնելու համար ազդու միջոցներ ի գործ դրած է»:

ուշ քան թէ երբեք.—մնում է մեզ աւերացնելու»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Լվովից «Presse» լրագրին հաղորդում են մայիսի 8-ից, որ այդտեղ պոլիցիան կալաւորեց մի արուեստաւորին, որ կայնում էր պատերի վրա յիշատակական պրօկլամա-ցիաները:

«Չաս» լրագրը իր մայիսի 8-ի առաջ-նորդող յօդուածում յանդիմանում է ուսու-ժողովուրդը իր վարմունքի պատճառով հը-րէաների դէմ, որոնց դէմ յարուցված հա-լածանքը հարակից հետզհետէ ապրած-վում է դէպի հիւսիս և աւելի սպառնալի է դառնում: Լրագիրը մատնացոյց է անում այն բարեկամական յարաբերութիւնների վրա, որոնք կան լեհացիների և հրէաների մէջ և գարմացած հարցնում է ի՞նչի տասն և իններորդ դարի Եւրոպան, ի՞նչի «չը-րէական համաշխարհային միութիւնը» սառնասիրտ կերպով նայում են հրէաների հալածման վրա Ռուսաստանում, այն ինչ, մի քանի տարի առաջ Ռուսիայի հրէա-նրի դրութիւնը դարձիկ էր ընդհանուր եւրոպական խնդիր:

ՖՐԱՆՍԻԱ

Մարտի մէջ կատարված յայտնի ցոյցի առիթով ուսուց հիւպատոսի դէմ, Բարտե-լեմի Սենտ-Կլեր յայտնեց ուսուց գեսպան իշխան Օրլովին, որ Ռուսաստանը կատա-լու է իր իշխանի հետ հարաբերութիւնները: Գատա-տանական հալածանքը այդ ցոյցի առաջ-նորդների դէմ, որոնց լուռ մն է և Պաուլա Մինկ, սկսվեցաւ աւելի շուտ, քան ի է ուսուց գեսպանը գանգատից Փրանսիա-կան կառավարութեանը: Յանցաւորները մե-ղադրվում են անկարգութիւն գործելու և ուսուց կայսրին վիրաւորելու մէջ:

Ֆրանսիական միսիստր-տեղապահ Ռուս-տան յայտնեց Տուրիսի բէյին, որ մի քանի անուանի տեղացիներ, անբաւական լինելով Ֆրանսիայի հետ կապված գաշնադրութե-

կա մեռնելուց յետոյ ոստիկանութիւնը չնե-րին գտել չէ գտել, ամենքը մէկ հայր է, արդէն ոստիկանութիւնը երկու ոտքով չներին չէ կա-րողանում բռնել, չորս ոտքով չներին միթէ կա-րելի է ձերբակալել:

Տեսէք, նիւթ գտնելու համար քիչ մնաց չը-ներին ուս գնացի, մի հրաշքով կարողացայ չը-գատել, կատարողարար վրաս յարձակվեցան, ո՞ գրեթէ թերեւս ֆելիտոնիստ լինելու ճանաչեցին, ինչ և իցէ մէկ էլ այն կողմերը չեմ գնայ:

Այսպէս է, չը կայ երկրազնտիս վրա մի զբաղ-մունք (բացի վանքի միաբանութիւնից) որ աշ-խարհային վտանգներից մարդ սպաս լինի, դրա համար մարդս պէտք է իր կենքը ապահովու-նէ, որպէս զի ինքը մեռնելուց յետոյ, մնացող-ները գտնէ մի բան ստանան, կամ եթէ ինքը մինչ որոշեալ ժամանակը կենդանի մնայ, խոս-տացեալ գումարը ինքը ստանայ. բայց Թիֆլիսի համար դրա մէջ էլ մի մեծ արգելք կայ. կենաց ապահովութեան կանտորի առաջին պոյմանն է որ կենքը ապահովուցած անձը Թիֆլիսից Փո-թի տանող երկաթուղով ճանապարհորդելու ի-բաւուրը չը պիտի ունենայ:

Վ. Պոլսում անիրաւութիւնները բազմապատկ-վում են, թիւրքերը սկսել են իրանց նախապա-չարեալ զգուշութիւնները աւելի եռանդով ստա-կացնել հայերի վերաբերմամբ: Բանտարկում են առանց խտրութեան, խմբաբիր, պատմագիր, տպագրիչ, գրաշար, հայկաբան, գրախճառ, աղ-

նից, մտադիր են այժմեան բէյին գահըն-կէց անել և նրա տեղ ընտրել մէկ ուրիշ: Բուստան պահանջեց կալանաւորել գաւա-ղիներին և ըննութիւն նշանակել:

Ֆրանսիայի և Վենեցուէլայի հանրապե-տութեան մէջ անբաւականութիւն պատա-հեց, որովհետև երկրորդ չէ վճարում Ֆը-րանսիային այն 305,000 գոլլար, որ նա պարտ է Ֆրանսիային դեռ կայսրութեան ժամանակից: Այդ հարցի պատճառով ծա-ղած անբաւականութիւնները առիթ տուին Ֆրանսիական դեսպանին ընդհատել դիպ-լոմատիական յարաբերութիւնները Վենե-ցուէլայի կառավարութեան հետ և Ֆրանսի-աւա ուղեւորվել:

Գամբետտայի փայլուն յաղթութիւնը լրագրիներին քննութեան նախագուշակու-թիւնների և ենթադրութիւնների առար-կայ է դարձել: «Republique Francaise» լրագիրը յայտնում է, որ պատգամաւորների ժողովի վճռից յետոյ Ֆրանսիայի համար նոր դարապուխ է սկսվում: Բոլոր անհամա-ձայնութիւնները կը մուսացվին և ապագայ ընտրութիւններին ժամանակ կանդիդատնե-րից կը պահանջվի յայտնել իրանց կար-ծիքները այն ընդարձակ սօցիալական վե-րանորոգութիւնների մասին, որոնց պէտք է իրագործէ պատգամաւորների ապագայ ժողովը: Բոլոր կուսակցութիւնների լրա-գիրները խօսում են Գամբետտայի զօրու-թեան և կոչման մասին: Ընտրողական հարցի քննութեան օրը պատգամաւորների ժողովը կասկածում էր քուէարկութեան հե-տեանքը: Նիստից մի օր առաջ բոլոր պատ-գամաւորներին ուղարկվեցաւ Գրեվիի «La Paix» լրագրի այն համարը, որտեղ նկա-րագրված էին Բարգուի և Գամբետտայի նախագծից առաջնալի փոփոխութիւնը: Հա-րաւորութեամբ տեղերը, զիպլոմատիական լոճա-նրի մէջ գտնվում էին բոլոր պետութիւն-ների ներկայացուցիչները: Հարկերից աւելի սենատորներ սպասում էին Գամբետտայի ձառնին Մինիստր Ժիւլ Ֆերրիի գեկուցումը Տուրիսի հետ գաշնադրութիւն կապելու մասին անկատարի անցաւ: Ընդհանուր ու-շադրութիւնը աւելի էլ լարվեցաւ, երբ Գամբետտա բարձրացաւ ամբիժնի վրա: Ժո-ղովի մէջ տիրեց լուռութիւն: Գամբետտայի ձառն տեղ տեղ շատ լաւ էր, բայց նա յա-ջորդաբար չէր խօսում, որովհետև նրան

պայն երաժիշտ, բանաստեղծ և այլն. այս ըն-թացքով մի օր ամբողջ հայերին պէտք է բան-տարկեն, բայց այդքան հայ բովանդակելու չափ մեծ բանտ չը կայ. ևս խորհուրդ կը տայի Օսմա-նեան կառավարութեան որ բոլոր հայերին Հա-յաստան աքսորէր. ահաւասիկ յարմար և լայ-նածաւալ մի բանտ, հայկական հարցն էլ ինքն ըստ ինքեան լուծված կը լինէր: Թիւրքին նպաստակ է հայերին ոչնչացնել, բայց ողորմե-լին շատ է սխալվում, նա կարծում է թէ հա-յերը տուրմա են, որ առանց ծանկու կարելի է կուլ տալ. խեղճը չէ իմանում թէ հայը անցեա-լին մէջ ինչ խորագէտ և հօր տէրութեանց ճըն-չու մեղի տակ չէ անհետացել: միթէ ի կորուստ դատապարտված թիւրքի ծաղրելի կամակորու-թեանը պիտի փճանայ հայը: Այնու ամենայ-նիւ Պոլսում հայերի վախը օմբիքական է դար-ձել. ինչպէս երեւում է երկու հայի մէջ տեղի ունեցած հետեւալ խօսակցութիւնից:

— Բարի լոյս, պարոն Մամիկոնեան,  
— Սուս կնք եղբայր, կամաց ասա, զուլուս փորձանքի կը դնես:  
— Ի՞նչ կայ եղբայր, ինչ ասացի:  
— Ես Մամիկոնեան չեմ, անունս փոխեցի, հիմա անունս Գուրգուկեանն է:  
— Ի՞նչ է պատճառը:  
— Վախենում եմ որ ինձ չը բանտարկեն, վարդան Մամիկոնեանի տղան կարծելով լուսւմ ենք որ վերջապէս Անգլիան գժալով

անդադար ընդհատում էին և նա ստիպ-ված էր սրամիտ պատասխաններ տալ, ու-րոնք ոգևորութեամբ էին ընդունվում: Նրա ձառից յետոյ պատգամաւորները դարձեալ կասկածում էին քուէարկութեան հետե-ւանքները և անհամբերութեամբ սպասում էին նրա սկսվելուն: Երբ յայտնվեցաւ Գամ-բետտայի յաղթութիւնը, ամենքը նրան շըր-ջապատեցին և սկսեցին շնորհաւորել: Պատգամաւորների ժողովի վճռը երեւի կը հաստատվի սենատից: Մինիստրները չը մասնակցեցին քուէարկութեանը: Ժիւլ Ֆըր-րի և նահապետ Գրեվիի զգուժում են, որ ի-րանք յաղթված են:

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Փարիզ, 18 մայիսի

Նա ժամանակ չը կայ որ Ֆրանսիան սկսեց իր պատերազմական գործողութիւնը վայրենի խրոմիրների դէմ և այսքան ժամանակամիջո-ցում դեռ աջող կերպով է յառաջ տանում իր գործը: Այստեղի լրագրիների ասածներին նայե-լով պէտք է շուտով վերջանար վայրենիների կատարեալ յաղթութիւնը, բայց եղանակների վատ լինելու պատճառով մի քիչ երկար կը տեւ: Հեռագրիներից տեղեկանում ենք, որ Ֆրանսիա-կան զօրքը արդէն հինգ կիլոմէտր հեռու է դանվում թուրքից: Գեռ ևս մի վճռողական պատերազմ տեղի չէ ունեցել, որի համար բա-ւական են համարում միայն տասն ու հինգ հա-զար զինուոր: Խոր միջոցներ մինչև այժմ, ընդ-հանարապէս, միտ տեղի են տուել Ֆրանսիական զօրքերին անշան գիմադրութեամբ և կենտրո-նանում են մի բաւականին դժուարմտաչելի լեռան վրա, ուր թողված է իրենց նշանաւոր սուրբը:

«Le Rappel»-ը Բապպէլ—լրագրի խմբագիրը իր առաջնորդող յօդուածում յայտնում է այն կարծիքը, թէ Ֆրանսիան պիտի շտապէ պատե-րազմ շուտով վերջանելու, որպէս զի սրանից էլ մի նոր կնճռոտ հարց չը ծագէ եւրոպական տէրութիւնների մէջ որովհետև, ստում է պարոնը, Ալֆրիկայում և Թուրքիայում սրբազան պատե-րազմ են քարոզում մասնատական հողերական-ները և հաւատացեալները այս քարոզներով ու-ղեւորված սպանում են կոտորել բոլոր եւրո-պական գաղթականութիւնները: Եթէ այսպէս պատահի, աւելացնում է պարոնը, որը շատ ցաւալի հետեանքներ կուենայ, այն ժամանակ բոլոր տէրութիւնները ստիպված պէտք է պա-տերազմական նաւատորմ ուղարկեն աֆրիկա-կան ափերը չարագործներին պատժելու. հետե-ւաբար պիտի ծագէ մի նոր կնճռոտ և կշքոտծ հարց, որը լաւ ապագայ չէ խոստանում ընդ-

Հայաստանի վիճակի վրա, ուղում է այդ հար-ցին վերջնական կերպով մի որոշում տալ իր ազդեցութիւնը ի գործ դնելով: Տար Աստուած, որ ստատանս փորը չը մտնէր, և այս անգամ էլ Հայաստանին Աֆրիկայի ստան չաւեր, ինչպէս անցեալ տարի Վիւրցիտտան ասած էր. բայց վախենալու բան չը կայ, թէ կուզէ Պետլիստ-տան ասէ, Աստուած կենանք տայ Կ. Պոլսոյ Ե-րեսփոխանական ժողովին, նա խնայն մի բո-ղոք կանէ, այն ժամանակ Անգլիան բանից պըր-ծած է:

Խեղճ Հայաստան, ոչ ոք վրան չը խղճար, ամեն չարեաց դարման կը գտնեն, օրինակ խաղողը ֆիլօքսերա ունի, սրա դեղը գտնված է. ցորենը մորեխ ունի, սրան էլ ճարը մտածե-ցին. բայց հայը քերթը ունի, սրան ինչու մի հնար չեն մտածեր, կարծես թէ հայ խաղողի և ցորենի չափ արժէք չունենար: Որքան լաւ կը լինէր եթէ լուի ծաղիկի փոշիի նման մի դեղ գտնէին և Հայաստանի քրդերական դժբեր վրա այդ փոշից ցանէին քրդերին ջնջելու. համար Արդարն մի փոշի կայ, որի գոյը լուի ծաղիկի նման դեղին չէ, այլ սե է, դժբախտաբար այդ սե փոշիի հոտը Օսմանեան կառավարութեան քթին անախորժ թուրքուն համար մտտերուն արկնեց, բայց...



# Յ Ա Յ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

## ԾԻԱԽՈՏԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Կովկաս հիւրանոցի տակը, Երեւանեան հրապարակի վերայ ստացված է

Կ Օ Ս Տ Ա Ն Գ Ի Ի Ն Օ Պ Օ Լ Ի Յ

Իսկական ճաճկաստանի ծխախոտ նոր կտորած

Ս ա մ ս օ ն և Կ է օ բ է թ

որ գերազանցում է թէ համոզի և թէ արմատով

1—3 (2)

**ԶԱՐՄԱՆԱԼԻ ԷԺԱՆ ԳՆՈՎ**  
Ճարվում է արտասահմանի շախմատիստան  
**ՅԵՄԵՆՏ** ֆոթիո մեջ էլիսար **ԲԱԲԱ**  
**ԼՕՎԻ** մօտ, գուլթայիս մեջ **ԿՈՒՐ**  
**ՅՕՎԻ** մօտ: Նշանակ է ծախվում են շա-  
խմատի գնորդ **ԲՆԱԿԱՆ ՄԵՂՐԱ**  
**ՄՈՍԵՐ** սեփական գործարանից, **ԹԻՖ-**  
**ԼԻՍՈՒՄ** Սիօնկայա փողոցի վրա,  
**ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ** և **ԳՕՐԻՈՒՄ**:  
ԻՎԱՆ ԿՈՒՐՅՕՎ  
2—11 (2)

Ժողովի եմ, ժողովում եմ և շուտով 'ի  
լոյս պէտք է ածեմ հայկական ձայնագրու-  
թեամբ «ճարվար ձայնագրեալ երգա-  
րան» ուստի խնդրում եմ ձայնագրագէտ-  
ներին և այն պարտններին, որոց մօտ գը-  
տանվում են ազգային երգեր թէ հայկա-  
կան և թէ եւրօպական ձայնագրութեամբ  
(նօտաներով) բարեհաճել մինչև յառաջա-  
կայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ: Երգեր  
ուղարկողների ազգանունները կը տպա-  
գրուին երգարանի վերջը և մի-մի օրինակ  
էլ ձրիակէս կը ստանան: Վարձատրութիւն  
պահանջողները ևս կարող են իրանց պայ-  
մանները յայտնել իմ հասցէն: Տիֆլիս, Եգ-  
րիկ քահանայի երգչակնոց: 1—10

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննու-  
թիւնները  
Մայիսի 22 և 23-ին Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.  
" 25-ից—30-ը Հաւլարարի Մարիամեան օր. ուսումն.  
" 28 և 29-ին Կուկիու թանգոյեան օր. ուսումն.  
" 30-ին Հաւլարարի Ս. Մինաս եկ. ուսումն.  
Յունիսի 1 և 2-ին Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն.  
" 3 և 4-ին Ջգրաշէն եկ. ուսումնարաններում.  
" 5-ին Շամքուեցոց եկ. ուսումնարանում.  
" 6-ին Չորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.  
" 8-ին Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.  
" 9-ին Չուղուրէթի Ս. Աստուած. եկ. ուսումնարաններում.  
Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

### Պ Ր Օ Յ Ե Ս Օ Ր

### Յ. Կ. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ

Գեղարուեստական պատկերները արդէն վաղուց է որ համաշխարհական անուն են  
ստացել և գարդարում են ուսու և օտարազգի մեծատունների շքեղ սայլօնները և պատ-  
կերական գալերիաները, բայց հասարակութեան մեծադէպ մասին համար դժբա իւրեանց  
թանգութեան պատճառով բոլորովին անմատչելի են:  
Զիջանելով իւր տաղանդի բազմաթիւ պատուողներին, որոնք արժան դնով ցանկա-  
նում են ունենալ նորա պատկերների ճիշդ արտատպը, պրօֆեսօր Ա. յվազովսկին եւձ  
բացառական իրաւունք տուաւ հրատարակել իւր ամենաբեկի պատկերներուն ԻՎԱՆ-  
ՏԻՊ (OLEOGRAPHIE) UPSUSIՊԵՆԸ (FACSIMILE) այն անհրաժեշտ պայմանով,  
որ հրատարակութիւնը լինի կատարեալ գեղարուեստական գործ:  
Մտադիր լինելով հրատարակել մի շարք պ. Ա. յվազովսկե հռչակաւոր պատկեր-  
ների, ես ներկայ ժամանակս ձեռնամուխ եղայ փորձի համար արտատպել նորա վերջի  
պատմական պատկերները. Խ. ԿՕՒՈՒՄԲ ԶԱՆԱՊԱՐԶՈՒՄ ԴԵՊՈ ԱՄԵՐԻԿԱՅ (ալիկո-  
ճ ու թիւն ովկիտանսի վերայ) և ԿՕՒՈՒՄԲԻ ԶԱՆԻՍԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ՅԱՄԱԲ ԻՋ-  
ՆԵԼԸ ՍԱՆՍԱՎԱԿԱՌՐ ԿԳՁՈՒՄ (արեգակի ծագումը): Երկու պատկերներն էլ եր-  
կայնութեամբ մի արշին (70<sup>1</sup>/<sub>2</sub> sentim.) և լայնութեամբ 12 վերջի (52<sup>1</sup>/<sub>2</sub> seintm.)  
արտատպվում են Բերլինում Շտեյնբօկի երեւելի գործարանում և լոյս կը-  
տանեն ներկայ տարուս օգոստոսին:  
Որովհետև օլեոգրաֆիկական պատկերների քանակութիւնը ճիշդ գեղարուեստական  
արտատպ պատճառով կատարել սահմանափակ է և սահմանափակ է, ուստի ցանկա-  
ցողք կարող են կանխիկ ստորագրուել և գումարով ինձ հետեւեալ հասցէով Ս. Пе-  
тербурге, Владимирская ул. № 15 кв. 8 Леониды Егоровуы Мазурову. Եր-  
կու պատկերներին ստորագրողները ճանապարհածախով հանդերձ վճարում են 28  
ռուբլ. իսկ մի հատին 17 ռուբլ. փողը կարելի է ուղարկել մասամբ, բայց յառաջ  
քան բոլոր գումարի լրումն պատկերները չեն ուղարկուի:  
Օլեոգրաֆիկական պատկերները պիտի ուղարկվին կտաւի վրայ քաշած պատեր  
զարդարելու համար, կամ բրիտանական թղթի վրայ այրօմների համար, ուստի ստորա-  
գրողները թող բարեհաճեն յայտնելու կտաւի թէ թղթի վրայ ցանկանում են ստանալ  
յիշեալ պատկերները: Պատկերների համար պատրաստվում են շքեղ շրջանակներ  
զանազան արժանաւորութեամբ և կուղարկվին ստորագրողներուն ըստ նոցա պահան-  
ջման ամենամատչելի գնով:  
Ճաճկաստանից կարող են դիմել հետեւեալ հասցէով՝ S. Petersburg, rue Wla-  
dimirsky № 15 Mr. L. Mazuroff, ուղարկելով մէկ պատկերի համար 50 Քրանկ,  
իսկ երկուսին միասին 80 Քր.

Հրատարակել է Ս. ՄԱԶՈՒՐՅԱՆՏ

3—3

Въ Редакціи газеты  
«МШАКЪ»  
Продается  
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ  
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“  
Д. Григорія АРЦРУНИ.  
Брошюра напечатана въ Москвѣ.  
Цѣна 25 коп.

**ՎԻՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ** (աթուներ և բազմաթուներ) ծախվում են մեծ  
քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատարիկաց փողոցի անկիւնում ՄԻ-  
ԲԱՅԵԼ ՏԵՐՆԵԿՈՂՈՍՏԵԱՆԻ պահեստում:  
Օտարազգաբայից կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу  
Н. Теръ-Никогосову.  
5—150

Արդէն ուղարկեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՅՅԻԻ ԽԵՆԹԸ**՝ անու-  
նով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ,  
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաբե-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ  
պ. Ալեքսանդր Թարեանեանցին, ԹԱՐՎԻՋ՝ պ. Կրիզոր Բէջանեանցին.  
Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБЪЛУ АП-  
РЪСЯНЦУ.

Թիֆլիզում կազմվում է «Մարմնամարզական  
ընկերութիւն» (Гимнастическое общество), որի  
նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժ-  
վելու մարմնամարզութեան սրախարութեան  
(Фехшованье) և հրացան արձակելու մէջ, քա-  
ղաքից դուրս զբօսանքներ և ուրիշ թոյլ տված  
զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են  
ֆիզիկական կարողութիւնը:  
Ընկերութեան կանոնադրութիւնը տեղութիւ-  
նից արդէն հաստատված է և տպված է № 90  
«Кавказъ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին:  
«Մարմնամարզական ընկերութեան» անդամ  
գրվել և տարեկան 10 ռուբլի վճարել կարելի է:  
1) Փոխարքայի գլխաւոր կառավարութեան  
ղեկարարամետում, կարը կարծովի կետերի  
մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցե-  
րեկվայ:  
2) Վիկտոր Ալեքսանդրովի Կինգելտտի մօտ  
6-ից մինչև 8-ը երեկոյեան, Թամաշելի տանը,  
Սոլդատսկի բազարի վրա:  
3) «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ:  
4) Ալեքսանդր Ալեքսանդրովի Բրուսի մօտ:  
Միտայելովսկայա փողոցի վրա, ուսուական մա-  
զազիւնում:

Արդէն վաճառվում է  
ԻՆՁ ԲԱՆ Է  
**ՃԱՆՏԱՍԻՏԸ**  
Ինչ բանով կարելի է փրկուել նորանից  
և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժո-  
ղովրդական և հասարակաց մատչելի խրատ  
բժիշկ Պ. Ա. Խլինսկոյ:  
Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրանց  
Կինն է 15 կօպ. 100-ներով գնողներին դի-  
ջուսն կը լինի: Մեր հասցէն՝ Въ Эривань  
А. Гуламирянцу

**ԾԱՆՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ**  
**ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** մուրաբա-  
ներ, կոնֆեկաներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, Ա-  
ՄԱՆԵՂԷՆ, բոխաներ, թասեր, երես լուա-  
նալու ամաններ, շայնիներ, ԲԱՍՄԱԿՆԵՐ,  
կերակրի ամաններ (СУДЕИ), մատուցարան-  
ներ, ԿՈՂՊԵՐՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, գգալներ,  
ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տկարակ-  
ներ, ՀՐԱՅԱՆՆԵՐ, ԲԵՂՈՂՎԵՐՆԵՐ, այրօմ  
ներ, ՄԱՃԱԿԱՎՆԵՐ, ՀԱԳՈՒՍ, տրիկօ, պա-  
րուսին, թաշկինակներ, երեսբիներ, կիծո-  
կա, դուրաններ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏՎԵՆ, խե-  
րեա, կօնեակ և այլն: Թէ՛ս մեծ քանակու-  
թեամբ վԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԿԸ  
44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54  
ռ., և այլն: Այդ բոլորը կարելի է գանել  
**ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ:**  
Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մա-  
զնեկիւ, խեթ ԾԱՐԱԻԻ դէժ, ԽԻՆԱՅԻ դի-  
նի ջերմի դէժ, կարբօլեան ՓՕՇԻ, հեղուկ  
և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վառարկողե-  
տի համար, պարսկական փօշի: 1—100

**«Խ Ե Ն Թ Ը»**  
ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՁԻՆ ՌՈՒՍ-ՌՈՒՐԲԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԵՂԵՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅՅԻԻ  
Տպված մտքուր թղթի վրա, գերբը բաղ-  
կանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է  
«Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական  
գրախաճառանոցում», «Կովկասեան գրա-  
խաճառանոցում» պ. Զաքարիա Կրիզորեան-  
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզար-  
Չեանցի, Հովեհանցի ծխախոտի մազաղին-  
ներում:  
Կինն է 1 ռուբլ 20 կօպ.:

«ԵՔՐ ԿԱՍՈՒՄՕՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԸԼ-  
Լաւոր գրասենակի մէջ, Երեւանկայա հրա-  
պարակի վրա, Ջակելու տանը բացված է  
ստորագրութիւն յօդուս 'ի Տէր Հանգու-  
ցեալ Կայսր Ալեքսանդր II-ի ՈՐԲԱՆՈ-  
ՑԻ, որ բացվելու է Թիֆլիսի մէջ:  
6—15

Ներսիսեան դրոցի մի ուսուցիչ, ա-  
մենաչափաւոր գնորդ և ձեռնաու-  
պայմաններով, պատրաստում է աշակեր-  
տներին նոյն դպրոցի բոլոր պատրաս-  
տականների, և I, II և III-դ դասա-  
տանց համար:  
Նշանակ պատրաստում է հայ-օրի-  
որդներին Ս. Գայանեան և Յովնանեան  
օրիորդաց դպրոցների բոլոր դասա-  
տանց համար:  
Ցանկացողները, թող մինչև յունի-  
սի 15-ը յայտնեն իրենց պահանջները  
Ներսիսեան դպրոցի տեսուչ պ. Արշակ  
Նահապետեանին:  
1—3